

ՀԱՄԿ (Բ) Կ ԿԿ-Ի ԿՈՒԷՏ-ՊՐՈՊ ԲԱԺԻՆ

---

Ծ Ր Ա Կ Ի Ր

Կառակցական լուսավորչական հրատարակչական կենտրոնի համար  
1981/1982 ուսումնական տարվա

Ն Ա Խ Ն Ա Կ Ա Ն Կ ՈՒ Ս Գ Պ Ր Ո Ց Ի  
(Գ Ա Ղ Ա Գ Ա Ց Ի Ն)  
Ծ Ր Ա Կ Ի Ր

3
Ն-18

---

Պ Ե Տ Զ Ր Ա Ց

1 9 8 1

Յ Ե Ր Ե Վ Ա Ն



10.07.2013

11.241

3  
G-18

ԱՄ

1 DEC 2009  
25 SEP 2006

ՀԱՄԿ (Բ) Կ ԿԿ.Ի ԿՈՒԼՏ-ՊՐՈՊ ԲԵԺԻՆ

Ծ Ր Ա Պ Ի Ր

Կուսակցական լուսավորչական ցանցի  
ստորին դղակների համար  
1931/32 ուսումնական տարվա

ՆԱԽՆԱԿԱՆ ԿՈՒՍԴՊՐՈՑԻ  
(ՔԱՂԱՔԱՅԻՆ)  
Ծ Ր Ա Պ Ի Ր

1991

13822-57

Թարգմ. Հ. Շ.

ՊԵՏՂՐԱՏ



ՅԵՐԵՎԱՆ



Գ Ե Թ Ի Կ Ե Թ Ե Թ Ե  
Հրատարակ. № 1913  
Գլավիրա 6974 (բ)  
Պատվեր 5819  
Տիրաժ 3000

ՆԱԽՆԱԿԱՆ ԿՈՒՍԳՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐ (ԲԱՂԱՔԻ)

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Նախնական կուսպրոցի պարապմունքները նախատեսված են 5 ամսվա համար, ընդամենը 30 պարապմունք (հինգ որը մեկ ամսական) : Այս թվից 10 պարապմունք հասկացվում է ընթացիկ քաղաքականության հարցերի մշակմանը, հետևաբար տվյալ ծրագրի համար մնում է 20 պարապմունք : Այդ հաշվով էլ կազմված է ծրագիրը :

Ներկա ծրագիրը զգալի չափով տարբերվում է 1930 թ. ծրագրից : Նախ՝ այս ծրագրում կան լրացուցիչ թեմաներ (նրանցից մի քանիսը մտցված են տեխնիկական պրոպագանդայի տարրերը կուսլուսավորության ցանցում արմատացնելու առնչությամբ) : յերկրորդ՝ թեմաների վորոշ տեղափոխություն և կատարված—«ՆեՊ-ի վերջին ետապը» թեման գետեղված է «Յերկու սխտեմ» թեմայից հետո : Վերջապես, վորոշ չափով կրճատվում են ծրագրի փաստական նյութերը և ծրագրերը թարմացված է ՀամԿ(բ)ԿԿ-ի դեկտեմբերյան (1930 թ.) պլենումի նյութերի, ԽՍՀՄ խորհուրդների V I համագումարի, ԿԻԳԿ-ի XI պլենումի և վերջին չրջանի կուսակցական ու խորհրդային այլ վորոշումների հիման վրա :

Ծրագիրն իր բոլոր թեմաների բովանդակությամբ կարող է ընդունելի լինել արդյունաբերության բոլոր ճյուղերի նախնական դպրոցների համար : սակայն, հատուկ թեմաների շուրջը պարապելիս, անհրաժեշտ է լայն չափով մեջտեղ բերել տվյալ ձեռնարկության և տվյալ արդյունաբերական ճյուղի վորջ փաստական նյութերը (փաստեր և թվեր) :

«Արդյունաբերության տվյալ ճյուղի պլանային-տնտեսական ինդիքները», «տեխնոլոգիական պրոցեսի հիմնական մոմենտները» և «տվյալ ձեռնարկության արդՖինպլանը» թեմաների ծրագիրը պետք է մշակել տեղական ինժեներ-տեխնիկական ուժերի միջոցով, մասնակից դարձնելով նաև տնտեսավարներին, տեղական, կուսակցական, պրոֆեսիոնալ և խորհրդային աշխատողներին :

Տվյալ ծրագրի համար հիմնական ձեռնարկներ հանդիսանում են՝ «Корженцев „Азбука Ленинизма“, Сталин „Вопросы Ленинизма“ և կուսակցության XVI համագումարի, ԿԿ-ի հետագա պլենումների, Խորհուրդների VI համագումարի և ԿԻԳԿ-ի XI պլենումի վորոշումները :



**ՅԵՐԿՈՒ ՄԻՍՏԵՄ (ԿԱՊԻՏԱԼԻԶՄ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄ)**

Տնտեսութեան խորհրդային սխտեմի արմատական տարբերութեանը կապիտալիստական սխտեմից: Արտադրական հարաբերութեանը յերկու սխտեմները: Արտադրութեան գործիքների ու միջոցների մասնավոր սեփականութեանը կապիտալիստական յերկըրներում և արտադրութեան միջոցների ազգայնացումը խորհրդային պետութեան կողմից ԽՍՀՄ-ում:

Կապիտալիստական ձեռնարկութեանը և հետեփոխական-սոցիալիստական տիպի ձեռնարկութեանը: Կապիտալիստական սոցիալիստացումը և նրա սոցիալական բովանդակութեանը: Արտադրութեան սոցիալիստական ուսցիոնարացումը և աշխատանքի պաշտպանութեանը ԽՍՀՄ-ում:

Ժողովրդական յեկամտի արտադրութեանն ու բաշխումը կապիտալիզմի պայմաններում և ԽՍՀՄ-ում: Ծահույթը վորպես կապիտալիստական արտադրութեան միակ յսթան: Անիշխանութեանը և մրցութեանը վորպես կապիտալիստական արտադրութեան հիմնական դժեք: Կապիտալիստների հարստացումը մեկ բեկոում, աշխատավորութեան աղքատութեանն ու քայքայումը մյուս բեկոում: «Պլանային ղեկավարման և աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի սխտեմատիկ բարձրացման սկզբունքը սոցիալիզմի հիմնական պահանջն է»: Այնը սոցիալիստական շինարարութեան տեմպերի մասին: Աջ թեքումը դիտավոր վտանգն է տվյալ շրջանում:

Խորհրդային պետութեանը վորպես պետութեան նոր տիպ: Պետութեան դասակարգային եյութեանը: Պետութեան գերը կապիտալիզմի պայմաններում և ԽՍՀՄ-ում: Բուրժուական դեմոկրատիան և պրոլետարական դեմոկրատիան: Խորհրդային պետութեանը վորպես սոցիալիստական շինարարութեան կադմակերպիչ:

Քաղաքի ու գյուղի հակադրութեանը կապիտալիստական յերկըրներում և աչք հակադրութեան վորչնչացումը ԽՍՀՄ-ում:

«Տնտեսական ճգնաժամերի և դորձագրկութեան աճման անխուստիելութեանը կապիտալիստական յերկըրներում: Գերադասարութեան ճգնաժամերի բացակայութեանը խորհրդային տնտեսութեան սխտեմում և դորձագրկութեան վերացումը ԽՍՀՄ-ում»:

Կապիտալիստական սխտեմի հակապետութեանները վորպես կապիտալիզմի անխուստիելի կործանման և սոցիալիզմի հաղթանակի պատճառներ:

Աճող տնտեսական վերելքի պատճառները մեզ մոտ և աճող տնտեսական ճգնաժամի պատճառները կապիտալիստական յերկըրներում: Ժամանակակից տնտեսական ճգնաժամը վորպես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի վրա հիմնված համաշխարհային ճգնաժամ: Համաշխարհային կապիտալիզմի հակապետութեանները գրսեվորումն ու սրումը: «Կադմակերպված կապիտալիզմի» թեորիայի սեանկութեանը:

Կապիտալիստական յերկըրների բանվոր դասակարգի ու աշխատավորական մասաների շահագործումն ու ժեղացնելու, գաղութային ու կիսագաղութային յերկըրներում ճնշումը սաստկացնելու և ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա կադմակերպելու հաշվին ճգնաժամից դուրս գալու վորճեքը կապիտալիզմի կողմից: Իմպերիալիստական նոր պատերազմների պատրաստութեանը: Սոցիալ-Ֆաշիզմի գերը կապիտալիստների կողմից բանվորութեան դեմ մղվող պայքարում և ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա պատրաստելու գործում:

Հեղափոխական շարժման աճումը կապիտալիստական յերկըրներում և դադարեցնումը:

Պրոլետարական հեղափոխութեան պատմական անխուստիելիութեանն ու անհրաժեշտութեանը: Կապիտալիզմի և կոմունիզմի միջև անցման շրջանի անհրաժեշտութեանը: Սոցիալիզմի և կոմունիզմի:

Զ Թ Ե Մ Ա

**ՆԵՊ-Ի ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆ—ՍՈՑԻԱԼԻԶՄԻ**

**ԽՈՒՆՋԻՆ ՇՐՋԱՆ**

(2 պարագումով)

Համաշխարհային-պատմական նշանակութեան ունեցող առաջախաղացումներ ԽՍՀՄ-ի դարդացման մեջ սոցիալիզմի ուղղութեամբ—ինդուստրացման բուռն տեմպերը, ագրարային յերկըրից ինդուստրիալ յերկըրի վերածվելը, կապիտալիստական յերկըրների նկատմամբ մեր տեխնիկական-տնտեսական անկախութեան աճումը. «ոյ ում» հարցի լուծումն արդյունաբերութեան մեջ սոցիալիզմի ողան. դորձագրկութեան վերացումը. աշխատանքի սոցիալիստական ձեերի—սոցմրցման և հարվածայնութեան—մաստալական աճումը, չքափոր և միջակ գյուղացիութեան յայն մասաների անցումը սոցիալիզմի կողմը:

Վճռական հացահատիկային շրջանների համատարած կուլկուլիզացման ավարտումը և ԽՍՀՄ-ի գյուղատնտեսութեան համատարած կոլեկտիվացման ինդրի իրագործումը 1932 թ. դարնուն. հար



մատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակուլթյան վերացու-  
մը վորպես դատակարգի, կապիտալիզմի արմատների վոչնչացու-  
մը դյուղում: ՆեՊ-ի վերջին շրջանի բնութագրութունը: «Մենք  
թեալիս ենք սոցիալիզմի շրջանը» (Ստալին): Սոցիալիստական  
եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը հնդամյակի յեր-  
րորդ, վճռական տարում:

Տեխնիկային, եկոնոմիկային և ֆինանսին տիրապետելու խնդի-  
րը: «Տեխնիկական վերակառուցման շրջանում վճռում է ամեն ինչ»  
(Ստալին): Նոր ձևով աշխատել, նոր ձևով դեկալարել: Դիմա-  
դրկության և մանր-բուրժուական հաստատրացման դեմ պայքա-  
րելը, վորպես 1931 թ. պլանի կատարման և սոցիալիստական շի-  
նարարության հետագա բարձր տեմպերի ապահովման պայման:  
Մեր հաջողությունների նշանակութունը համաշխարհային պրո-  
լետարիատի հեղափոխական պայքարի ծավալման համար:

Ներկա շրջանի դժվարությունների բնույթը: Մեր դժվարու-  
թյուններն այն ատանձնահատկութունն ունեն, վոր պարունակում  
են նրանց հաղթահարման հնարավորությունը: Դատակարգային  
պայքարի սրումը ներկա շրջանում: Վոզլ Ֆրոնտով ծավալուն սո-  
ցիալիստական արշավը, վորպես դժվարությունները հաղթահա-  
րելու և դատակարգային թշնամուն վերջնականապես պարտության  
մատնելու ճանապարհ:

Սոցիալիստական շինարարության ներկա ետապի նախապա-  
րաւտումը կուսակցության վոզլ նախիին քաղաքականության կող-  
մից: ՆեՊ-ի առաջին ստադիան և ժողովրդական տնտեսության վե-  
րակառուցման համար մոլոր պայքարը. XIV համագումարն ին-  
դուստրացման համագումար է, XV համագումարը՝ դյուղատն-  
տեսության կոլեկտիվացման համագումար. XVI համագումարը՝  
վոզլ Ֆրոնտով սոցիալիստական ծավալուն արշավի համագումար:  
Մենք թեալիս ենք ՆեՊ-ի վերջին շրջանը—սոցիալիզմի առաջին  
շրջանը:

Աջերի և «ձախերի» սխալները սոցիալիստական շինարարության  
ներկա շրջանի գնահատման խնդրում: Աջերը և «ձախերը» չեն հա-  
կանում ՆեՊ-ի բնույթը և խեղաթյուրում են նրա լինելու մեկ-  
նաբանությունը: Պայքար յերկու Ֆրոնտի վրա և հաշտվողականու-  
թյան դեմ, վորպես մեր հաջողությունների պայման:

Խոչոր մեքենայական արդյունաբերությունը, վորպես սոցիա-  
լիզմի նյութական հիմունք: Խոչոր մեքենայական արդյունաբերու-  
թյան նշանակութունը դյուղատնտեսության սոցիալիստական վե-  
րակառուցման համար: Ինդուստրացման բարձր տեմպերի անհրա-  
ժեշտությունը ԽՍՀՄ-ի տնտեսական ինքնուրույնությունն ու պաշտ-  
պանունակությունն ապահովելու համար: Մեր արդյունաբերության  
հետամնացությունը առաջավոր կապիտալիստական յերկրները  
դարգացման նկատմամբ և 10 տարում տեխնիկական-տնտեսական  
տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնելու  
ու նրանցից առաջ անցնելու խնդիրը: Ծանր արդյունաբերության  
դարգացման արագ տեմպերի նշանակությունը թեթև արդյունաբե-  
րության աճումն ապահովելու համար: Ինդուստրացումը վորպես  
ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու ամբողջ պլանի հիմունք. հնդամ-  
յակը վորպես Խ. Միության ինդուստրացման գործնական պլան:

ԽՍՀՄ-ի ինդուստրացման հաջողությունները—արտադրության  
և արդյունաբերական շինարարության բուռն տեմպերը: Հնդամ-  
յակի կատարումը մի շարք ճյուղերում 3 ու 3 1/2 տարում, իսկ վոզլ  
ժողովրդական տնտեսության մեջ՝ 4 տարում: Արդյունաբերու-  
թյան տեսակարար կշիռն աճումը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտե-  
սության մեջ. կապիտալիստական տարրերի վանումը արդյունա-  
բերությունից. ծանր արդյունաբերության աճումը. նյութական  
բազայի ստեղծումը դյուղատնտեսության կոլեկտիվացման համար:  
Արդյունաբերության դարգացման ասպարիզում ձեռք բերված մա-  
կարդակի անբավարար լինելը և տեմպերի հետագա ամրացման ան-  
հրաժեշտությունը: Տնտեսական հաշվարկ, պայքար ինքնաբեքի  
իջեցման և վորակի լավացման համար. պայքար դիմադրկության  
դեմ և աշխատանքի ճիշտ կազմակերպման համար, վորպես սոցիա-  
լիստական ինդուստրացման տեմպերն արագացնելու պայման:  
Կոնկրետ և ոպերատիվ դեկալարություն:

Մեր արդյունաբերության հիմքում ամենաառաջավոր տեխնի-  
կական բազա ստեղծելու անհրաժեշտությունն ու կարելիությունը:  
ԽՍՀՄ-ի ելեկտրիֆիկացիայի պլանի նշանակությունը: Ելեկտրո-  
տեխնիկական արդյունաբերության ծավալման խնդիրները: Աճի



և մետալուրգիական արդյունաբերութեան զարգացումը, վորպէս  
ԽՍՀՄ-ի վողջ արդյունաբերութեան և վողջ ժողովրդական տնտե-  
սութեան զարգացման հիմունք: Ուրալ-Կուզնեցկյան կոմբինատը,  
Գնեպրոպետրովսկի կոմբինատը: Մեքենաշինարարութեանը և նրա  
նշանակութեանը յերկրի ինդուստրացման գործում: Տրանսպորտի  
զարգացումն ու սոցիալիստական վերակառուցումը, վորպէս հնգամ-  
յակը չորս տարում իրագործելու, ինդուստրացման բարձր տեմպերն  
ամրացնելու և ծայրերկրները յերկրի տնտեսական կյանքում լայ-  
նորեն ներգրավելու կենտրոնական ողակ: Տրանսպորտի վերակա-  
ռուցման խնդիրները սովյալ շրջանում: Գյուղատնտեսութեանն  
սարսափող արդյունաբերական ճյուղերի արագ ծափալման ան-  
հրաժեշտութեանը. գյուղատնտեսական մեքենաշինարարութեանը  
և քիմիան: Թեթևի արդյունաբերութեանն ամբողջ արագ ծափալե-  
լու անհրաժեշտութեանն ու հնարավորութեանը:

ԽՍՀՄ-ի ինդուստրացման հաջողութեանները վորպէս կուսակ-  
ցութեան գլխավոր գծի անշեղ իրագործման ուղղութեամբ Համ  
Կ(բ)Կ ԿԿ-ի լենինյան ղեկավարութեան և բանվորական մասսաների  
աշխատանքային խանդավառութեան արդյունք: Աշերի և «ձախերի»  
մինիմալիզմն ու անձնատվութեանը ինդուստրացման տեմպերի հար-  
ցերում, նրանց պայքարն ընդդէմ հնգամյակի: Վնասարարութեանը:  
Աջ ուղորդող դեր վնասարարների որակավորման և այն պայ-  
քարում, վոր մղում են վերջիններս խորհրդային իշխանութեան դեմ:  
Ուղորդող դեր գործնականում: Սոցիալիստական շինարարութեան  
պրակտիկայում հայտաբերվող աջ և «ձախ» ուղորդող դեր  
պայքարելու կոնկրետ հարցերը: Յերկու Ֆրոնտի վրա և հաշտվո-  
ղականութեան դեմ պայքարելու անհրաժեշտութեանը:

4-րդ ԹԵՄԱ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ  
(2 պարագմունք)

Մանր անհատական գյուղացիական տնտեսութեանը վորպէս  
սոցիալիստական շինարարութեան ղեկավարութեանների հիմնական  
պատճառները մեկը գյուղում: Գյուղացիական տնտեսութեան սո-  
ցիալիստական վերակառուցման անհրաժեշտութեանը: Լենինյան  
կոոպերատիվ պլանը վորպէս այդ վերակառուցման հիմնական մի-  
ջոց: Ինդուստրացման հաջողութեանները, չքավորութեան վրա հեն-  
վելու, միջակի հետ գաշնակցելու և կուլակի դեմ պայքարելու  
խնդրի ճիշտ իրագործումը:

Յերկու Ֆրոնտում վճռական պայքարը, վորպէս գյուղի վերակա-  
ռուցման ասպարիզում ձեռք բերված վճռական հաջողութեանների  
պատճառներ: Սորտնտեսութեանների և մեքենա-տրակտորային կա-  
յանների առաջատար դերը գյուղատնտեսութեան սոցիալիստական  
վերակառուցման գործում:

Կուլեկտիվացման բուն տեմպերը. կոլտնտշինարարութեան  
հնգամյա պլանի վերակատարումը հնգամյակի յերրորդ տարում.  
հիմնական հացահատիկային շրջանների համատարած կուլեկտիվաց-  
ման ավարտումը հնգամյակի յերրորդ տարում. կուսակցութեան  
գլխավորվող 1932 թ. ԽՍՀՄ-ի համատարած կուլեկտիվացումը հիմ-  
նականում ավարտելու մասին: Կուլակութեան վորպէս դասակարգի՝  
վերացումը համատարած կուլեկտիվացման շրջաններում. կուլակի  
սահմանափակումն ու վանումը այն շրջաններում, ուր անհատ  
տնտեսութեանն և գերակշռում: Համ Կ(բ)Կ ԿԿ-ի ղեկավարվածները  
շրջանի կամ մարզի կուլեկտիվացումը հիմնականում ավարտելու չա-  
փանիշի, ինչպէս և կոլտնտեսութեանների կազմակերպչական-տնտե-  
սական ամրացման մասին: Կոլտնտեսականը գյուղատնտեսութեան  
կենտրոնական դեմքն և և պրոլետարիատի գլխավոր հենարանը գյու-  
ղում: Սորհրդային իշխանութեան գյուղական հենարանի հարցա-  
դրման փոփոխութեանը:

ԽՍՀՄ-ն ամենախոշոր գյուղատնտեսական յերկիրն և ամբողջ  
աշխարհում:

Սորտնտեսութեանների բուն աճումը: Գյուղի սոցիալիստա-  
կան սեկտորի վերակշիռ դերը գյուղատնտեսական արտադրանքի  
արտադրութեան ասպարիզում հնգամյակի յերրորդ տարում:

Հացահատիկային պրոբլեմի հիմնականում լուծվելը հնգամյա-  
կի ասպին յերկու տարիների ընթացքում: Անասնաբուծութեան և  
տեխնիկական կուլտուրաների պրոբլեմների լուծումը խորտնտեսու-  
թեանների և կոլտնտեսութեանների շինարարութեան հիման վրա:  
Գյուղատնտեսական սայրների մասնագիտացման խնդիրը:

Կուլեկտիվացման հետագա ծափալման հիմնական ուղիները.  
արտելը վորպէս կոլտնտեսութեան հիմնական ձև սովյալ շրջանում:  
Կամավորական սկզբունքների խիստ պահպանումը՝ գյուղա-  
ցիութեան չքավոր և միջակ մասսաներին ակտիվ կերպով կոլտնտե-  
սութեանները ներգրավելու: Կոլտնտեսութեանների կազմակերպ-  
չական ամրացման անհրաժեշտութեանը—արտադրութեան կազմա-  
կերպման հարցերը, կուլակների դուռումը, կոլտնտեսական մասսանե-  
րի ակտիվութեան լայն ծափալումը, գործավարձի վճռական կիրա-



ուումը, աշխատանքի կազմակերպման սոցիալիստական ձևերի ծա-  
վալումը կոլանտեսուեթյուններում: Պայքար հավասարեցման դեմ և  
գործավարձը, վորպես կոլանտեսուեթյուններում աշխատանքի ար-  
տադրողականութունը բարձրացնելու հիմնական լծակներ: Հան-  
րայնացված ֆոնդերի մեծացումը: Կոլեկտիվ տնտեսութունների  
ստորին ձևերից բարձր ձևերին անցնելը և նրանց ամրացումը: Պայ-  
քար կազմերի համար՝ պայքար անդրտեսնիկայի համար:

Կուլակի կատաղի դիմադրութունը կոլեկտիվացման հանդեպ:  
Գյուղի սոցիալիստական վերակառուցման հարցերում աջերի բռնած  
դիրքի կուլակային ելուեթյունը՝ աջերի և կոնդրասովականների  
փաստական բլուրը: «Ձախ» խոտորումները և վարչարարութունը  
կոլեկտիվացման անցկացման գործում: Նրանց վնասակարութունը  
գյուղի սոցիալիստական շինարարության համար: Վճռական հար-  
ձակում կուլակի դեմ և պայքար յերկու Ֆրոնտի վրա ու հաշտվո-  
ղականության դեմ, վորպես ձևը բերված հաջողութունների և  
կոլեկտիվացման հետագա ծավալման հիմնական պայմաններ:

5-րդ ԹԵՄԱ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԵՆԵԿԱՆ ՅԵՎ  
ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՏԵՆԵԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ  
ԱՍՊԱՐԻՁՈՒՄ

(2 պարապմունք)

Բարձր շահույթի ձգտումը և մրցութունը վորպես տեսնիկա-  
յի զարգացման խթաններ կապիտալիստական հասարակարդում:  
Տեսնիկական նորութունները, դիտական հայտնաբերումները և  
դյուստերը, վորպես կապիտալիզմի հիմնական նպատակներին ծա-  
ռայող միջոցներ: Մանուֆակտուրայից դեպի մեքենայական ար-  
տադրութունը: Կապիտալիստական խոշոր մեքենայական արտա-  
դրության դերը պորբետարիատի առաջացման գործում: Արդյունա-  
բերական հեղաշրջումն Անգլիայում: Շոդեմեքենայի գյուտի նշա-  
նակութունը: Արկրայտի գործվածքային մեքենայի դյուստը (1769)՝  
Գեվիլի ներքին ալյուման շարժիչների յերևան դալը ( 894 ): Շոդե-  
տուրբինները և ելեկտրո-տեսնիկայի նվաճումները, նրանց դերը  
արդյունաբերության զարգացման գործում:

(Տեսնիկայի պատմության մի քանի տարրեր՝ արդյունաբեր-  
ության տվյալ ճյուղի համապատասխան): Արտադրության միջոց-  
ների մասնավոր սեփականութունը կապիտալիզմի պայմաններում,

վորպես դիտության և տեսնիկայի զարգացումն արգելակող պայ-  
ման: Պատենտներ: Խոշոր կապիտալի մաղնատների մոնոպոլի իրա-  
վունքը: Տեսնիկական պրոցեսները և ճգնաժամները: Ձեռնարկու-  
թյան արտադրական կարողության և տեսնիկական միջոցների լրիվ  
տղտադրման անկարելիութունը կապիտալիզմի պայմաններում:  
Արտադրողական ուժերի զարգացման և արտադրական հարաբերու-  
թյունների կապիտալիստական սխտեմի միջև հակադրության  
սրումը: Կապիտալիստական արտադրական հարաբերությունները  
վորպես տեսնիկայի զարգացման հիմնական խոչընդոտ:

Սոցիալիստական հասարակարդում տեսնիկայի կատարելիք  
դերի սկզբունքային տարբերութունը կապիտալիստական հասա-  
րակակարդում կատարած դերից: Սոցիալիստական հասարակա-  
կարդում արտադրության նպատակն և անմիջապես բավարարել  
հանրային պահանջները: Կապիտալիստական ռացիոնալացումը, նրա  
բովանդակութունը: Սոցիալիստական ռացիոնալացումը և արտադ-  
րական պրոցեսի վերակառուցումը մարդու ազատագրման, նրա աշ-  
խատանքի պայմանների արմատական թեթևացման տեսանկյան  
տակ: Աշխատանքը դառնում է մարդկային բնական պահանջ: Ելեկ-  
տրիֆիկացիան վորպես ենթոգետիկական բազա, վորի վրա միայն  
հնարավոր է սոցիալիստական հասարակարդի կառուցումը: Մի-  
ասնությունը, պլանայութունը, արտադրության միջոցների հան-  
րայնացումը մասնավոր սեփականության, արտադրության ու շու-  
կայի անարխիայի, մրցության ու ճգնաժամների վոչնչացումը, վոր-  
պես սոցիալիստական ռացիոնալ ու խնայողական տնտեսութուն  
կառուցելու հիմնական պայմաններ: Սոցիալիստական հասարա-  
կակարդի արտադրողական ուժերի աշխարհագրական ռացիոնալ  
տեղադրումը: Աշխատավորական լայն մասսաները հազորդակից  
են դառնում դիտությանը, և այդ հիման վրա վերջինս լայն զար-  
գացում է ստանում: Աշխատանքի սոցիալիստական ձևերի դուզոր-  
դումը սոցիալիստական բազմակողմանի մեքենայացման ու ռացիո-  
նալացման հետ առաջատոր տեսնիկայի ու դիտության հիման վրա:  
Սոցիալիստական տեսնիկայի զարգացումը քաղաքի և գյուղի հա-  
կասությունների վոչնչացման նախադրյալն է: Ֆիզիկական ու  
մտավոր աշխատանքի հակասությունների վոչնչացումը: Պայքար  
տեսնիկայի համար անցման շրջանում:

Մեր նվաճումները դիտության և տեսնիկայի ասպարիզում  
(արդյունաբերության տվյալ ճյուղից վերցրած որինակներ):

Կապիտալիստական հասարակարդում դիտությունը և տեսնի-



Նիկան ծառայում են բուրժուազիային: Մեր խնդիրն է՝ դիտու-  
թյունը և տեխնիկան դարձնել կոմունիստական հասարակարգի  
գեներ: Հակահեղափոխական վնասարարութեան դասերը: Վնասա-  
րարութեան դասակարգային արմատները:

Տեխնիկական ինտելիգենցիայի շերտավորումը և նրա մեծ մասի  
անցումը խորհրդային իշխանութեան կողմը: Վնասարարական ին-  
տելիգենցիայի մնացորդների դեմ վճռական պայքար մղելուն զու-  
գընթաց, անհրաժեշտ և ուշադիր վերաբերմունք ցույց տալ խոր-  
հրդային տրամադրություններ ունեցող ինտելիգենցիային, ամեն  
կերպ աջակցել նրան և լծել հասարակական աշխատանքի: Ձեռնար-  
կությունները ղեկավարության ուժեղացումը:

Գիտությունն ու տեխնիկային տիրապետելը բանվոր դասակար-  
գի և կոմունիստական կուսակցության կարևորագույն խնդիրն և  
ավյալ շրջանում: Բանվորներից մասնագետները կազմեր ստեղծե-  
լու խնդիրը: Գիտությունն ու տեխնիկային տիրապետելու խնդրի  
նշանակությունը «առաջավոր կապիտալիստական յերկրներին հաս-  
նելու և անցնելու» խնդրի առնչությամբ: «Մենք առաջավոր կա-  
պիտալիստական յերկրներից յետ ենք մնացել 50-100 տարով»  
(Ստալին):

«Առառավելն 10 տարուց մենք պետք է կտրենք անցնենք այն տա-  
րածությունը, վորով մենք յետ ենք մնացել կապիտալիզմի առա-  
ջավոր յերկրներից: Կա՛մ մենք այդ կանենք, կա՛մ մեզ կճզմեն»  
(Ստալին):

Մեր յերկրում կան բոլոր այսպես կոչված «որյեկտիվ» հնարա-  
վորությունները «կապիտալիստական առաջավոր յերկրներին հաս-  
նելու և անցնելու» համար: Կան բավականաչափ բնական հարստու-  
թյուններ, կա պրոլետարական իշխանություն, բանվորների և գյու-  
ղացիների բազմամիլիոն մասսաներն ոգնում են այդ իշխանութեա-  
նը, կան այնպիսի կարգեր, «վորոնք աղատ են կապիտալիզմի ան-  
բուժելի հիվանդություններից և վորոնք լուրջ առավելություններ  
ունեն կապիտալիզմի համեմատությամբ», կա այնպիսի մի կուսակ-  
ցություն, վոր ապահովում է մեր առաջախաղացումը «յոթ մղոնա-  
նոց քայլերով»: Այդ հնարավորությունների ոգտադործման անբա-  
վարար կարողությունը:

Յեղրակացություն. «բայլչեկները պետք է տիրապետեն տեխ-  
նիկային: Ժամանակն է, վոր էրենք՝ բայլչեկները մասնագետներ  
դառնան: Տեխնիկական վերակառուցման շրջանում վճռում է ա-  
մեն ինչ» (Ստալին):

ԽՍՀՄ-Ի ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՍՎՈՐՈՒՄԸ ՎՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-  
ԼԻՍՏԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Միասնական ընդհանուր տնտեսական պլանի սկզբունքային ան-  
կարելիությունը կապիտալիստական հասարակարգում:

Սոցիալիստական հեղափոխությունը, պրոլետարիատի ղեկ-  
տանդության և արտադրության միջոցների հանրայնացումը միայն  
կարող են նախադրյալներ ստեղծել պլանային տնտեսության հա-  
մար: Պլանը սոցիալիստական շինարարության հիմքն է:

Վոզջ ժողովրդական տնտեսության տարեկան պլանը: Ժո-  
ղովրդական տնտեսության կոնստրուկցիան: Պետպեկտիվ պլա-  
նավորում: ԳՈՆԼՈՒՄ-ի պլանը և նրա նշանակությունը:

Սոցիալիզմի կառուցման հնգամյա պլանը: Հնգամյակը չորս,  
յերեք և յերկու և կես տարում: 1931 թ. ժողտնտեսական պլանի  
առանձնահատկությունները—ժողովրդական տնտեսության բոլոր  
ճյուղերի անմիջական պլանային ղեկավարությունը: Յեռամյա-  
կային պլաններ: Ձեռնարկությունների արդՖինպլանները, նրանց  
նշանակությունը: Պայքար նրանց կառարման համար:

Ճիշտ ու վորոշ հաշվառումը, վորպես ժողովրդական տնտեսու-  
թյան պլանավորման նախադրյալ:

Յերկրորդ հնգամյակի պլանի կազմությունը:

Պլանավորման մարմինները: Պլանները գործարանին, ցեխին,  
բրիգադին և դադրյահին հասցնելը: Պլանը կազմելուց հետո ծավալ-  
վող պլանային ղեկավարությունը—պլանի իրագործումը, ճշտումը  
և պարզումը: Պրոլետարական և կոլտնտեսական մասսաների ամե-  
նալայն մասնակցությունը պլանային աշխատանքին: Մամուլը վոր-  
պես պլանավորման լծակ: Տնտեսական հաշվարկի և պայմանա-  
դրերի դերը պլանավորման գործում: Մեր տնտեսական հաշվար-  
կի տարրերությունը կապիտալիստական ձեռնարկությունների ա-  
ռևտրական ադատությունից: Կոնտրոլ ուսերով: Ներգործարանա-  
յին պլանավորում և ցեխերի տնտեսական հաշվարկը:

Աշխատանքի սոցիալիստական նոր ձևերը և պլանավորումը:  
Սոցմրցումն ու հարվածախուժությունը՝ վորպես պլանների կառար-  
ման և դերակատարման պայման: Հնգամյակի հաջողությունները  
սոցմրցման և հարվածախուժության հաջողություններն են: Ծրջա-  
դարձ դեպի տեխնիկան:

Վնասարարությունը պլանավորման մեջ: Վնասարարության  
հիմնական նպատակներն ու մեթոդները: Պլանավորման բնագալա-



ուի հերթական խնդիրները—սլանավորման արարատի տիրապետումը բանվոր դասակարգի կողմից, խորթ սարերի վտարումը սլանավորման մարմիններից, վնասարարութեան հետևանքների ամենաարագ վերացումը, պայքար սլանային դիտութեան դասակարգային անտարբերութեան համար, պայքար սլանավորողների բայլշիկյան կազմերի համար, պայքար սլանի կատարման համար:

Հակալենինյան դիրքավորումները սլանավորման հարցերում: Տրոցկիզմի հակահեղափոխական դիրքը սլանավորման հարցերում: Պլանի աջ ուղորտունիստական թերազնահատումը: Աջ—«ձախ» բոլոր սլանավորման մասին: Յերկու Ֆրոնտով պայքարը սլանավորման բնազավառում: Աջերի ու «ձախերի» որեկտրի միացումը վնասարարների հետ սլանավորման հարցերում:

7-րդ ԹԵՄԱ

### ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԻ ՅԵՎ ՎԱՐԿԻ ԲՆԱԳՎԱՌՈՒՄ

Միանական ֆինանսական սլանը սոցիալիստական շինարարութեան հզոր լծակն է: «Առանց խտրիվ կատարելու ֆինանսը, չի կարելի իրադրծել ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերի համար նշանակված սլանները»: Միանական ֆինանսը սոցիալիստական շինարարութեան վիթխարի հաջողութեանները արտացոլումն է:

Ներքին կուտակումները, վերսկս սոցիալիստական շինարարութեան ֆինանսավորման աղբյուր: Ժողովրդական յեկամտի աճման տեմպերն առաջ և հիմա: Ժողովրդական յեկամտի ոգտադրծումը մեզ մոտ և նրա տարբերութեանը կապիտալիստականից տնտեսութեան սոցիալիստական կազմակերպում: Ժողովրդական յեկամտի կապիտալիստական թարանման վերացում: Պայքար ինսյոդութեան ութիմի համար, ինքնարժեքի իջեցման համար: Աղբյուրնախութեան միջոցների մոբիլիզացիա: Խորհրդային իշխանութեան հարկային քաղաքականութեանը: Հարկերը քաղաքում: Գյուղատնտեսական նոր հարկեր: Մեր հարկային քաղաքականութեան դասակարգային բնույթը:

Մեր ներքին փոխառութեանները դերը և նրանց տարբերութեանը կապիտալիստականից: Խնայողական դրամարկիները, կոոպերացիայի վաշակուտակման և ապահովութեան միջոցների դերը միջոցների մոբիլիզացիայի գործում:

Ֆինանսական սլանի դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում: Ֆինանսական սլանը և արանսպորտը: Ֆինան-

ական սլանը և կուլտուրական շինարարութեանը: Ֆինանսական սլանը և աղբյուրի քաղաքականութեանը: Միջոցների առավելագույն մոբիլիզացիան և ժողովրդական յեկամտի հտակ դասակարգային վերաբաշխումը միանական ֆինանսի հիմքերն են:

Վարկային ութորմը: Մուրհակային տնտեսական վարկի վերացումը: Մեր տնտեսութեան փոխանցումը սլանային վարկավորման ութերի վրա: Վարկային ութորմի կիրառման թերութեանները և նրանց վերացման ուղիները: Վարկավորման գործում արտիտարական հասարակայնութեան վերահսկողութեանն ութեղացելու անհրաժեշտութեանը:

Տնտեսական հաշվարկ: Պայմանադրեր: Կոնտրոլ ութլոմ: Յերկու Ֆրոնտով պայքար վաշխուտային քաղաքականութեան հարցերում—ընդդեմ այն աջ ութորտունիստական հաշացքների, վորոնք ԽՍՀՄ-ի դրամական շրջանառութեան և կապիտալիստական դրամական շրջանառութեան միջև տարբերութեան չեն դնում, ինչպես նաև ընդդեմ այն «ձախ» հաշացքների, վորոնք դրամը մեր պայմաններում դիտում են լոկ իրքն սոցիալիստական հասարակարգի «հաշվենիշներ»: Պայքար տնտեսական հաշվարկի համար և տնտեսաշարիկի թերազնահատման քննադատութեանը ՆԵՊ-ի տվյալ շրջանում: Պայքար սոցիալիզմի կոոպերացիայի գործում ֆինանսի ութեցած դերի ութորտունիստական թերազնահատման դեմ: Ֆինանսային համար պայքարայլ սոցիալիզմի համար պայքարել է: Վնասարարութեանը ֆինանսական աշխատանքի բնազավառում: Պայքար ֆինանսական կազմերի համար:

8-րդ ԹԵՄԱ

### ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լենինը այն դերի և խնդիրների մասին, վոր ունի կոոպերացիան արտիտարիատի դիկտատուրայի շրջանում: Պրոլետարիատի դիկտատուրան և յերկրի ինդուստրացիայի արագ տեմպը Լենինի կոոպերատիվ սլանի հաջող իրադրծման անհրաժեշտ պայմաններն են: Լենինի կոոպերատիվ սլանի յեղաթյուրումը տրոցկիստների և աջ ութորտունիստների կողմից:

Սպորտական կոոպերացիան վորպես սոցիալիստական շինարարութեան հզոր լծակ. բանվորների համապարփակ կոոպերացումը, մասնավոր կապիտալի վտարումը տարանքաշրջանառութեանից, սպորտկոոպերացիայի աստիճանական վերածումը մթերքների սոցիալիստական բաշխման ասպարատի, տնտրի միջոցով սոցիա-



լիստական մթերափոխանակման սահմանումը քաղաքի և գյուղի միջև : Կենցաղի վերակառուցումը նոր, կոլեկտիվ սկզբունքների հիման վրա : Սպառողներացիան արդիֆինալանը կատարելու և հնգամյակը 4, 3 ու 2<sup>1/2</sup> տարում իրագործելու ահաբիվ գործոնն է :

Բանվորական մատակարարման կազմակերպումը լայն սպառման ու տնտեսական գործածության ասպրանքներով և սննդամթերքներով : Ռեալ աշխատավարձի բարձրացումը : Ապրանքային ֆոնդերի դասակարգային բաշխումը ազգաբնակչության մեջ : Սպառողին սպասարկելու աշխատանքի վորակի վճռական բարելավումը և կոտպերացիայի ասպրառի աշխատանքի ուղղորդումը : Առևտրի սիտեմից անմիջապես ուղիղ մթերափոխանակման անցնելու տենդենցների դեմ վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը : Ապրանքի կուտակման փաստերի և ասպրանքների «գիմադրկման» վճռական վերացումը : Որոշրդային առևտուրը ամբողջ շրջանում : Գաքաքամերձ տնտեսությունների միջոցով պարենային բաղադրի կազմակերպումը : Գիրացման կայանների և կաթնատնտեսական ֆերմաների դերը մատակարարման պրոբլեմի լուծման խնդրում : Ձեռնարկություններում փակ բաշխիչների և փակ կոոպերատիվների կազմակերպումը, վորպես «ասպրանքների դասակարգային բաշխման կազմակերպչական ձև» : Հասարակական անդրի գորդացումն ու բարելավումը : Փայտերերի միջոցների ստավելադույն ներգրավումը կոոպերատիվ շրջանառության մեջ : Հարվածայինների ստաջնասերթ մատակարարումը :

Կոոպերատիվ հասարակայնության ուժեղացումը և կոոպերացիայի աշխատանքի հասարակական-մասսայական աշխատանքի լայն ծավալումը : Ինքնաքննադատության ծավալումը, կոոպերատիվ ասպրատի վճռական գոտումը դասակարգայնորեն խորթ տարբերից : Պայքար հափշտակումների, վատնումների, կորուստների, ասպրանքի պակասորդների, և նեպմանական շարչիական վորու դեմ : Նոր կադրերի պատրաստությունը, բանվորների և կոլտնտեսականների առաջըաչումը կոոպերատիվ ասպրատում : Ապրատի պատասխանատու աշխատողների բնորոյի լինելը (հրահանգիչներ, խանութի ու ճաչարանի վարիչներ և այլն) : Սոցմրցման և հարվածայնության ծավալումը : Բանվորական վերահսկիչ բրիգադների կազմակերպումը պրոֆմիությունների միջոցով՝ կոոպերատիվ աշխատանքի առանձին բնագավառները վերահսկողության տակ առնելու և հետադոտության յենթարկելու համար : Գործակատարների

նյութական դրության և կուլտուր-կենցաղային սպասարկման բարելավումը : Պայքար դասակարգային դժի խեղաթյուրումների և սպորտունիտական տարրերի դեմ, վորպես սպառողներացիաշխատանքի վերակառուցման հիմնական պայման :

Գ-Բ ԹՆՄԱ

ՊՐՈՖՄԻՍԻՏՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՐԵՍՈՎ ԴԵՊՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պրոֆմիությունների դերն ու նշանակությունը պրոլետարական պետության մեջ : Պրոֆմիությունները կոմունիզմի դպրոցներ են : Պրոլետարական միլիտանտ մասսաների դաստիարակությունը և նրանց կազմակերպումը սոցիալիստական հասարակարգի կառուցման խնդիրների շուրջը պրոֆմիությունների առաջնահերթ խնդիրն է :

ՀԱՄԿՈ-ի նախկին կազմի աջ ուղորտունիստական ղեկավարության դիմադրությունը այդ խնդիրների իրականացման գործում :

Պրոֆչարթման Լենինյան-բայլչեվիկյան ղեկավարությունն ամբացնելու ուղղությամը ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի ընդունած և XVI համագումարի կողմից համախոսությունը գտած միջոցառումները :

Պրոֆմիությունների շրջադարձը յերեսով դեպի արտադրություն, ահաբիվ մասնակցություն սոցիալիստական տնտեսության կառուցման գործում, պայքար արդիֆինալանի կատարման համար, բանվոր դասակարգի հետամնաց խավերում տիրող մանր-բուրժուական ստատուսների հալթահարում :

Սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը, վորպես պրոֆմիությունների վողջ աշխատանքի աշխուժացման վճռական ու հիմնական ողակ և բանվորական լայն մասսաների ներգրավումը արտադրության կառավարման գործում : Հարվածային բրիգադները, վորպես պրոֆմիությունների վողջ արտադրական գործունեյության հիմունք ձեռնարկություններում ու ցեխերում և վորպես պրոֆմիությունների աշխատանքի վերակառուցման հիմնական բաղա : Արտադրական խորհրդակցությունների արտադրական վերակառուցման ուղիները : Աչքի դարկող բանվորների, հատկապես հարվածայինների առաջըաչումը վորպես բոլոր պրոֆմիությունների կարեվորագույն խնդիր : ՀԱՄԿՈ-ի 5-րդ պլենումի մոբոչումները պրոֆմիությունների վերակառուցման հարցի առթիվ : Պրոֆմիությունների խնդրում և իրականացումը : Պրոֆմիությունների խնդիրը տեխնիկայի տիրապետման ասպարիզում :

1661-85-22861





Պրոֆմիտեթյունների դերն ու խնդիրները գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Գյուղի դասակարգային պայքարում և նրա սոցիալիստական վերակառուցման գործում պրոլետարիատի ունեցած դեկապար դերի տրեդյունիստական թերադնահատման դեմ վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը:

Սորհրդային պրոֆմիտեթյունների միջազգային աշխատանքը: Բանվորական լայն մասսաների խնտերնացիոնալ դաստիարակությունը:

Պրոֆմիտեթնական նոր դեկալար կադրերի առաջըաշումն ու պատրաստումը, վորպես կարևորագույն համակուսակցական խնդիր պրոֆմիտեթյունների աշխատանքի վերակառուցման գործում: Պրոֆմիտեթյունների խնդիրները բանվորական նոր կադրերի մեջ մասսայական լայն աշխատանք ծավալելու ուղղությամբ՝ նրանց պրոֆմիտեթյուններին, արտադրական խորհրդակցությունների և հարվածային բրիգադների մեջ ներգրավելու խմաստով:

Պրոֆմիտեթյունների վողջ գործունեությունը բանվորական կենցաղի ու մատակարարման բարելավման և կոոպերցիայում, պետական ու տնտեսական մարմիններում և պրոֆպարատում բուն դրած բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի հետ սերտորեն շաղկապելու անհրաժեշտությունը:

Պրոֆմիտեթնական աշխատանքի վերակառուցման գործնական խնդիրները ձևնարկությունում (չբնանում):

10-րդ ԹԵՄՍ

ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱ ՇՐՋԱՆՈՒՄ

Սորհրդային պետությունը վորպես պետության նոր տիպ, վորը բուրժուական պետությունից սկզբունքորեն տարբերվում և վող միայն էր դասակարգային եյությամբ, այլ էր և ներքին կառուցվածքով:

Սորհրդային պետությունը վորպես պրոլետարական դիկտատուրայի ձև, վորպես շահագործողների գլխագրությունը ճնշող ապարատ:

Սորհրդային պետությունը վորպես բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հատուկ ձև, բանվոր դասակարգի դեկալար դերով, սոցիալիստական հասարակակարգի կառուցման համար:

Սորհրդային պետությունը (ՍՍՀՄ) վորպես ազգային իրավահավասարություն ձև: Սկզբունքների վաստակալ իրավահավասարությունը ՍՍՀՄ-ում: Տնտեսական և կուլտուրական աջակցությունը հետամնաց ժողովուրդներին:

Սորհրդային պետությունը վորպես պրոլետարական դեմոկրատիայի ձև: Սորհրդային պետության աջ ուղորտունիստական և տրոցկիստական դնահատությունը:

Ապարտան ըստ ամենայնի մեծ չափով չբնաններին ու գյուղերին մոտեցնելու խնդիրը: Գալտոներին վերացման և չբնաններին ամբողջման նշանակությունը վորպես գյուղի սոցիալիստական հիմնական ողակի:

Սորհուրդներին և վողջ պետական ապարատի արմատական վերակառուցման խնդիրները մասսաների մոբիլիզացիայի լողունգի տակ: «Կուսակցության Լենինյան դժի կիրառումը, առանց աջ և «ձախ» ուղորտունիստական խեղաթյուրումների խորհրդային պրակտիկայում և ամենից ստաջ խորհուրդներին դեկալար որդաններին պրակտիկայում»: (Համկկ(բ) դեկա. պլենումի բանաձևից):

Գաղխորհրդի, նրա սեկցիաներին և պատգամավորական խմբերի աշխատանքը ձևնարկություններում: Սորհուրդներին դերը բանվորներին կուլտուր-կենցաղային և բնակարանային պայմաններին բարելավման գործում:

Պայքարը բյուրոկրատիզմի դեմ վորպես դասակարգային պայքարի հատուկ ձև: Բյուրոկրատիզմի դասակարգային բնույթը: Բյուրոկրատիզմի վտանգը: Այնքը և «ձախերը» բյուրոկրատիզմի դեմ պայքարելու հարցում: Բյուրոկրատիզմի դեմ պայքարելու հիմնական դժերը: Ինքնաքննադատություն ծավալումը, կատարման ստուգման գործի կողմախեղումը, ապարատի դտումը, առաջավոր բանվորների առաջըաշումը ապարատում: Բանվորներին պետական կառավարմանը ներգրավելու նոր ձևերի դարգացումը (բանվորական բրիգադներ, սոցիալիստական համատեղություն, «Թեթև հեծեկադրեր» խմբեր և այլն): Պետահիմնարկների նկատմամբ ձևնարկությունների չեթությունը սահմանելու դերը, նշանակությունը և խնդիրները:

Յերեսով դեպի կոլտնտեսական շինարարությունը չբնագարձ կատարելը խորհուրդներին առաջնահերթ խնդիրն է գյուղում: Սորհուրդները համատարած կոլեկտիվացման չբնաններում: Համապարած կոլեկտիվացման չբնաններում խորհուրդները վերացնելու լող:



գունդի սխալ և ուսուցումնախտական բնույթը: Խորհուրդները խնդիրները բատրակության և չքավորության կազմակերպման գործում: Բանվոր դասակարգի, ահաբեկիչ աջակցությունը դուրսից կսորհուրդները աշխատանքների վերակառուցմանը:

Այլ ուսուցումնախտի և արոցկիզմի ջանքերումը, վորպես պետապարատից բյուրոկրատիզմն արմատախիլ անելու և բյուրոկրատիզմի դեմ հաջող պայքարելու համար մասսաներին մորլիզացիայի յենթարկելու պայման:

Պայքարը խորհրդային սպարատում թե անջից և թե «ձախից» յեկող բյուրոկրատիզմի դրսեվորումների դեմ: Ուսուցումնախտների վտարումը խորհուրդներից: Խորհուրդների պրակտիկայում գոյություն ունեցող ուսուցումնախտի մերկացումը՝ ալյալ շրջանից վերցրած որինսակների հիման վրա:

11-րդ թեստ

ՊԱՅՔԱՐ ԿՈՒՆՍՈՒՐԱՅԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՑ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԴՐԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Լենինը կուլտուրական հեղափոխության մասին:

Կուլտուրական հեղափոխությունը պրոլետարիատի սոցիալիստական արշավի բաղկացուցիչ մասն է: Դասակարգային պայքարի սրումը կուլտուրական Ֆրոնտում: Թշնամի տարրերի աճող ախտիությունը կուլտուրայի Ֆրոնտում և մասսաների ախտիության վիթխարի աճումը կուլտուրայի համար մղվող պայքարում: Սոցմրցումն ու հարվածայնությունը կուլտուրական շինարարության գործում: Կուլտարչալը, կուլտեստաֆետան և կուլտրանակը վորպես կուլտուրական հեղափոխության հզոր լծակներ:

Կուսակցության գլխավոր գծի համար պայքարելը կուլտուրական շինարարության հարցերում: Այլ և «ձախ» ուսուցումնախտը կուլտուրական շինարարության հերցերում:

«Յերևանից դեպի տեխնիկան» լոզանդը վորպես անտեսական և կուլտուրական շինարարության վճռական ողակ:

Կուլտուրական Ֆրոնտի մարտական ճակատամասերը.

ա) պարտադիր ուսում և դպրոցի պոլիտեխնիկացիա: Գործարանային, կոլտեստային և խորհանտեսային կազմակերպությունների խնդիրները մասսայական դպրոցի վերակառուցման գործում: Պայքար ուսուցչական նոր կադրերի համար և ուսուցչության մեջ տարվելիք աշխատանքը (ուսուցչական մասսաների քաղաքական

ատտիարակությունը, նրանց մանկավարժական մակարդակի բարձրացումը):

բ) Անդրադեկտության վերացում: Անդրադեկտության վերացման դպրոցը վորպես հենակետ՝ արդՖինսյանի, կոլտեստական շարժման և կոլտեստիկարարության վորակի համար մղվող պայքարում:

գ) Պայքար բանվորներից դեկավար և տեխնիկական կադրեր պատրաստելու համար: Գործաչղպրոցներ: ԲՈՒՀ-երի և ԲՏՈՒՀ-ների վերակազմությունը: Գործարան-ԲՏՈՒՀ-ներ: Գյուղյերիս դպրոցները և դյուլտանտեսական կրթության ձևերը:

Դասընթացներ և հեռակա կրթություն: Պրոֆմիլությունների կուլտաշխատանքի վերակառուցումը: Գործարանային և շրջանային մամուլը: Ուղղիտն և կինոն ի սպաս կուլտուրական հեղափոխության: Մասսաների հակակրոնական դաստիաարկությունը:

Միասնական կուլտուրային վորպես կուլտուրական հեղափոխության և բալլչեիկյան պլանավորման խնդիրները շուրջը ուժերն ու միջոցները մորլիզացիայի յենթարկելու ձև: Ուսուցչության նյութական կրթության բարեկալումը և պայքարը հատասարեցման դեմ վորպես կուլտուրական հեղափոխության հաջող իրադորմման պայման:

12-րդ թեստ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՎԱՆԳԱՐԻ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏԻ ՎՐԱ

(2 պարագմուկ)

Բանվոր դասակարգը հասարակության ամենահեղափոխական և առաջավոր դասակարգն է: Բանվոր դասակարգի պատմական դերը:

Մարքս-լենինյան թեորիայով դիմում մարտական կուսակցության առկայությունը, վորպես այն հիմնական պայման, վորով բանվոր դասակարգը կատարում է իր դերը: Կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի առաջավոր, ամենադիտակից ու կազմակերպված դեկավար մասն է:

Կուսակցությունը և պրոլետարիատի մասսայական կազմակերպությունները: Խորհուրդները, պրոֆմիլությունները, կոոպերացիան և կոմյերիտմիլությունը կուսակցությունից դեպի մասսաները դնացող շարժատար փոխերն են: Համկ(բ)Կ-ն բանվոր դասակարգի միասնական և միակ կուսակցությունն է: Կուսակցության



զաղափարական և կազմակերպչական միասնութեան պահպանման ու ամրացման համար պայքարելը վորպես այն հիմնական պայման, վորով կուսակցութեանը կատարում է պրոլետարական դիկտատուրայի գեկալարման խնդիրները: Կուսակցական կյանքում կուսանդամները ղեկավարելու և ակտիվ մասնակցութեան վրա հիմնը ված ներկուսակցական յերկաթյա կարգապահութեանը, վորպես կուսակցութեան միասնութեան, միաձուլութեան և մարտունակութեան պահպանման ու ամրացման հիմնական պայման: Մարքս-լենինյան թեորիայի տիրապետման խնդիրները:

Կուսակցութեան ներսում յերկտառակութեան ատաճացնող, նոր, հակապրոլետարական կուսակցութեան կազմակերպելու ձրգտում ունեցող Ֆրակցիոնականութեան ելութեանը: X համադումարի վորոշումը կուսակցութեան միասնութեան մասին: Պայքար կուսակցութեան համար՝ ընդդեմ սորոցկիստական ուղղիցիայի:

Իսյլլեիկյան ինքնաքննադատութեան ելութեանը և նրա հատուկ նշանակութեանը ծավալուն սոցիալիստական արշավի պայմաններում: Ինքնաքննադատութեան լողունգի ուղորտունիստական խեղաթյուրումը աջ և «ձախ» ուկլոնիստները կողմից: Ներկուսակցական դեմոկրատիան և բայլլեիկյան ինքնաքննադատութեանը վորպես կուսակցութեան գլխավոր դժի համար ուղորտունիստները դեմ հաջող պայքարելու կարեվորագույն պայման:

Դեմոկրատական ցենտրալիզմը, վորպես կուսակցութեան կազմակերպչական կառուցվածքի հիմնական սկզբունք: Կուսակցութեան կանոնադրութեան հիմնական դրությունները:

Կուսակցութեան բջիջը վորպես կուսակցական կազմակերպութեան հիմունք: Կուսակցական բջիջների կառուցման արտադրական սկզբունքը: Կազմակերպչական կառուցվածքը (ԿԿ-ից մինչև բջիջ), կուսխմբակը և ողակային բջիջը ձեռնարկութեանում: Յերկու Փրոնտի վրա և հաշտվողականութեան դեմ պայքարելը վորպես բայլլեիկյան կուսակցականութեան հիմունք և կուսակցութեան գլխավոր դժի ու կուսարքերի միասնութեան համար պարքարելու կարեւորագույն պայման: Աջ ուղորտունիզմը վորպես գլխավոր վտանգ ավյալ չըջանում: Նրա դեմ վճռաբար պայքարելու խնդիրը, միաժամանակ չթուլացնելով պայքարը սորոցկիզմի և նրա բողբոջների՝ «ձախ» խոտորումների դեմ:

Տրոցկիզմի հակահեղափոխական ելութեանը—մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորութեան բացասում, բանվորագյուղացիական դաշինքի լենինյան ուսմունքի ու վիզիան տրոցկիզմ

մի կողմից, վերաբերմունքը միջակի հանդեպ: Պրոլետարատի և գյուղացիութեան հակասութեաններն ըստ Տրոցկու, զինված ընդհարման աստիճանի: Մանր գյուղացիական տնտեսութեանը վերակազմելու հնարավորութեան բացասում (գյուղացիութեան կլանման թեորիան): Լենինի կողակերատիվ պլանի բացասումը:

Տրոցկու մաքսիմալիզմը վերահանդեման չըջանում («գերինդուստրացում») և մինիմալիզմը վերակառուցման չըջանում: Տրոցկիզմի միացումը աջ թեքման հետ: Ինդուստրացման ասպարիզում վերցված տեմպերի բացասումը Տրոցկու կողմից: Կոլեկտիվացման և կուլակութեան՝ վորպես դասակարգի՝ վերացման քաղաքականութեան բացասումը:

Իսյլլեիկյան կազմակերպչական սկզբունքները և սորոցկիստական պայքարը կուսակցութեան դեմ: Կուսակցութեան մեջ Ֆրակցիոն լամբավորումների ազատութեան՝ «ներկուսակցական դեմոկրատիայի» Ֆրոդայով վարագուրված: Կուսակցական կարգապահութեան խախտում:

Հակահեղափոխական սորոցկիզմի և աջ ուղորտունիզմի միացումը՝ սոցիալիստական շինարարութեան հիմնական հարցերի աթիվ կուսակցութեան դեմ պայքարելիս: Կուսակցական պայքարի մեթոդներով զուգակերպութեան:

Սոցիալիստական վերակառուցման հարցերը կուսակցութեան XXVI համադումարում, և ՍՍՀՄ-ում տեղի ունեցող հեղափոխական նոր սորոցեաներն ըմբռնելու անկարողութեանը աջերի կողմից:

ա) Գյուղատնտեսութեան ասպարիզում—գյուղի հետ արտագրական գորման խնդրում կուսակցութեան վերցրած կուրսը, վորպես գյուղի արտադրական հարաբերութեանների սոցիալիստական վերակազմութեան միջոց՝ ի նպաստ պրոլետարական դիկտատուրայի ամրացման, աջերի կուրսն այս հարցում: Աջերը արտադրական գորման փոխարեն հանդես են բերում ասպանքաչըջանառութեան դժով կատարվելիք զողումը:

Կուսակցութեան քաղաքականութեանը խոհանտեսութեանները և կոլտնտեսութեանների շինարարութեան խնդրում, վորպես սոցիալիզմի միակ ճանապարհի, և աջերի դիրքավորումն անհատական տնտեսութեան ուղղութեամբ:

Լենինյան կողակերատիվ պլանի ու վիզիան աջերի կողմից և նրա փոխարինումը մատակարարող ու վաճառահանող կուսակցագյուղ: Առաջխաղացում դեպի «սոցիալիզմ» ամբողջ գյուղացիութեանը:



թյան հետ միասին. այստեղից՝ կուլակի ներածումը սոցիալիզմի մեջ ըստ աջերի: Կուլակին սահմանափակելուց դեպի նրա վերացումը՝ փորպես դասակարգի, համատարած կոլեկտիվացման հիման վրա, — կուսակցութեան այս քաղաքականութեանը աջերը հակադրում են դասակարգային պայքարից դեռ՝ սոցիալիստական ինքնահոս շինարարութեան թեորիան: Աջերը ժխտում են գյուղի շերտավորումները և սրված դասակարգային պայքարը վերակառուցման շրջանում:

բ) Արդյունաբերութեան ասպարիզում — կուսակցութեան վրձնական պայքարը ինդուստրացման ըստ հնարավորութեան մաքսիմալ սեփական համար, փորպես սոցիալիզմի դարդացման, կապիտալիստական կախումից ազատագրվելու և յերկրի սրաշապանուհակութեանն ամբասնելու միակ ճանապարհ, և աջերի պահանջները կապիտալ շինարարութեան պլանների կրճատման խնդրում: Ենդ սեղերին հավասարվելու ձգտում:

գ) Կուսակցութեան ասպարիզում — կուսակցութեան դիժը կուշարքերի միասնութեան ուղղութեամբ, և աջերի փորձը՝ վարկարեկելու կուսակցութեան շենիյան դիժը: Աջերի պայքարի փրակցիոն մեթոդները: Պրոֆմիութեանները կուսակցութեանը համադրելու փորձը աջերի կողմից:

Աջերը փաստորեն գնում են դեպի սոցիալարարութեան և ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հնարավորութեան բացասումը: Աջերի և «ձախերի» ընդհանուր վերջնական յեղրակացութեանները, փորքը հիմնականում հանդում են այն բանին, փոր յերկուսն էլ ժխտում են պրակտիկ սոցիալարարութեանը և մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորութեանը:

Աջ և «ձախ» սպորտուները ընդհանուր սոցիալական բազան: Աջ թեքումը փորպես կուլակային գործակալութեան կուսակցութեան մեջ: Աջ թեքումը փորպես արտահայտութեան այն դրոհի, փոր գործում են կուսակցութեան վրա ընդհանրապես կապիտալիստական մեռնող դասակարգերը և մասնավորապես յիկվիլացիայի յենիմարիվոզ կուլակութեանը:

Աջ թեքումը գլխավոր փանդն է ներկա շրջանում: Աջ թեքումը փորպես կուլակային-կապիտալիստական ռեստավրացիայի քաղաքական աղետուրա: Աջերի գաղափարական ազդակցութեանը կոնդրատեվականութեան և սուխանովչչիյայի հետ:

Կուսակցութեան XVI համագումարի փորշումը այն մասին, փոր աջ ուղղիցիայի հայացքներն անհամատեղելի յեն ՀամԿ(բ)Կ-ի պատկանիլութեան հետ:

Աջերի առաջնորդների յեյուլթը կուսակցութեան XVI համագումարում և Բուխարինի հետհամագումարյան հայտարարութեանը:

«Ձախ» խոտորումները կոլտնաշարժման ընտրավառում և միջակի նկատմամբ կոլեկտիվացման դարնանային շրջանում: «Ձախ» տատանումները փորպես արոցիկիզի սեղիզիվ:

Սիրցով-Լոմինսկեյի աջ-«ձախ» բլոկը, փորպես արոցիկիզի ու աջերի իգեաների անակցումը միացում աջ ուրտուներգի պրատֆորմայի վրա: Բլոկը փաստորեն ժխտում է այն հանգամանքը, փոր յերկիրը թեակիտիկ և սոցիալիզմի շրջանը, գրանով արմատապես հեռանում է կուսակցութեանից: Աջ-«ձախ» բլոկը կոլտնտեսական շինարարութեան, տնտեսական գրութեան, կապիտալ շինարարութեան, հնգամյա պլանի, բանվորները գրութեան, սկտապարասի, կուսակցութեան և ներկուսակցական սեփմի մասին:

Պայքար թեքումների և նրանց նկատմամբ հաշտվողականութեան դեմ, փորպես կուսակցութեան գլխավոր դիլ և սոցիալիզմի հիմքի կառուցումն ապարտելու համար սրայքարելու հիմնական պայման:

Հաշտվողականութեանը փորպես քաղաքական անակցումը բուսութեան և կուսակցութեան գլխավոր դիլից յերոզ թեքումների բողարիում: Հաշտվողականութեան սոչական յեյութեանը:

13-րդ թեքում

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՊԱՅԲԱՐԸ ՀԱՄԱՇԵԱՐ ՀԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ՀԱՄԱՇԵԱՐ ՀԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴ ԽԱՀՄ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽԸՆԴԻՐԸ

Կոմիստները փորպես պրոլետարիատի համաշխարհային կուսակցութեան, պրոլետարական դիկտատուրայի համար սրայքարոզ մարտիկ: ՀամԿ(բ)Կ-ի դերը կոմիստներում և բայլչեիզմի փորձի միջազգային նշանակութեանը: Կոմիստների ժրադրի, հիմնական գծերը և նրա նշանակութեանը: Կոմիստների կազմակերպչական սկզբունքները:

Հեոպատերազմյան կապիտալիզմի ընդհանուր ձգնաժամը և կոմիստների յնդիրները: Ժամանակակից տնտեսական ձգնաժամը և հարձակում բանվոր դասակարգի վրա: Պայքարը ձգնաժամից դուրս դալու հեղափոխական յերքի համար: Հեոպատերազմյան



կապիտալիզմի III շրջանի հակասութիւնների սրումը և նոր հեղափոխական վերելքը: Կապիտալիզմի զարգացման ներկա շրջանը փորպես պատերազմների և հեղափոխութիւնների յերկրորդ շրջանի հասունացում: Ուշարա-իմպերիալիզմի և «կազմակերպված կապիտալիզմի» սոցիալ-Ֆաշիստական թեորիան: «Կազմակերպված կապիտալիզմի» բուխարինյան թեորիայի զուգադիպումը սոցիալ-Ֆաշիստների ալլ հարցում ունեցած հայացքներին:

Կոմիտեերնի խնդիրները համաշխարհային ճգնաժամի և նոր հեղափոխական վերելքի պայմաններում:

Բանվոր դասակարգի մեծամասնութիւն նվաճումը, վորպես կոմկուսակցութիւնների գլխավոր խնդիր՝ պրոլետարիատի դիկտատուրայի, ճգնաժամից դուրս գալու հեղափոխական յեղքի համար փճոտական մարտերի նախադատրաստվելիս: Պայքար կապիտալիզմի հարձակման դեմ, պրոլետարիատի հակահարձակման կազմակերպում: Ներքեից միասնական Ֆրոնտ կազմելու տակտիկայի կիրառումը: Բանվորների հեռացումը սոցիալ-Ֆաշիզմից և համախմբումը կոմկուսակցութիւն չուրջը: Բանվոր դասակարգի մորիցիդացիան և աշխատավորական յայն մասսանրեի (գլուգացիութիւն, քաղաքային մանր-բուրժուազիայի) ներգրավումը ալլ պայքարում, փոր մղվում և բուրժուական դիկտատուրայի բոլոր ձևերի դեմ:

Յեղրայրական կոմկուսակցութիւնների խնդիրները՝ բուրժուազիայի գլխավոր հենարան՝ սոցիալ-դեմոկրատիայի դեմ մղվող պայքարում: Սոցիալ-Ֆաշիզմի մասսայական ռազան քայքայիչ փորպես կոմկուսակցութիւնների ամենազլխավոր խնդիրներից մեկը տվյալ շրջանում: Սոցիալ-դեմոկրատիան փորպես յերրորդ բուրժուական կուսակցութիւն:

Ազգային-հեղափոխական շարժումը զարգութներում ու կիսա-զարգութներում և կոմկուսակցութիւնների խնդիրները ազգային-հեղափոխական շարժումներում պրոլետարիատի հեղեմանիայի համար պայքարելիս (Չինաստանի և Հնդկաստանի որինակով):

Սուբյեկտիվ գործոնների փճոտական դերը պրոլետարիատի հաղթանակի համար մղվող պայքարում կապիտալիզմի զարգացման ներկա շրջանում:

Հեափոխական խնդիրների նկատմամբ հետամնացութիւն հաղթահարումը կոմկուսակցութիւնների կողմից և անխնա պայքար ընդդեմ գլխավոր փտանդ աջ թեքման, ընդդեմ «ձախ» թեքման և նրանց նկատմամբ հաշտվողականութիւն, վորպես Կոմիտեերնի

սեկցիաների առաջ դրված խնդիրների յուճման կարևորագույն պայման: Յեղրայրական կոմկուսակցութիւնների կազմակերպական խնդիրները Գերմանիայում և Լեհաստանում: Կոմկուսակցութիւնների ազգեցութիւն և հաջողութիւնների կազմակերպական ամբողջման անհրաժեշտութիւնն ու կարևորութիւնը:

ԽՍՀՄ-ն համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադն և և համաշխարհային հեղափոխութիւն ամբողջը: ԽՍՀՄ-ի կոմունիստների պարտականութիւնները պրոլետարիատի միջազգային համերաշխութիւն ամբողջման և մասսանրեի ինտերնացիոնալ պատիարակման գործում: ԽՍՀՄ-ն ճնշված ժողովուրդներին ձգող կենտրոնն և պրոլետարական դիկտատուրան փորպես ազգային ճնշումը փճնչացնելու դեմը (ազգային քայքայականութիւնը ԽՍՀՄ-ում): Կոտուցվող սոցիալիզմի և փտող կապիտալիզմի սխաւեմների հակասութիւնները սրումը համաշխարհային անտեսական ճգնաժամի և ԽՍՀՄ-ի սնցչինարարութիւն հաջողութիւնների պայմաններում: Հակախորհրդային ինտերվենցիայի վտանգի աճումը: Համաշխարհային իմպերիալիզմի հարվածային բրիգադ II ինտերնացիոնալի դերը հակախորհրդային ինտերվենցիայի նախադատրաստութիւն գործում:

Յեղրայրական կոմկուսակցութիւնների խնդիրները հակախորհրդային ինտերվենցիայի պատրաստութիւն դեմ պայքարելու գործում: ԽՍՀՄ-ի պրոլետարիատի խնդիրները յերկրի պաշտպանունակութիւնը բարձրացնելու համաշխարհային պրոլետարիատի սոցիալիստական հարկների պայքարում յախապատրաստելու գործում:





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Բացատրական քերթիկ . . . . .	3
1-ին ԹԵՄԱ. Յերկու սխառեմ (կապիտալիզմ և սոցիալիզմ) . . . . .	4
2-րդ ԹԵՄԱ. ՆեՊ-ի վերջին շրջան—սոցիալիզմի առաջին շրջան . . . . .	5
3-րդ ԹԵՄԱ. Ինդուստրացումը սոցիալիստական շինարարության հիմնական լծակն է . . . . .	7
4-րդ ԹԵՄԱ. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը . . . . .	8
5-րդ ԹԵՄԱ. Կոալիտալիստական ու սոցիալիստական տեխնիկան և յալշեվիկների խնդիրը տեխնիկայի տիրուպետման ասպարեզում . . . . .	10
6-րդ ԹԵՄԱ. ԽՍՀՄ-ի սնունդի պլանավորումը վորպես սոցիալիստական շինարարության հիմունք . . . . .	13
7-րդ ԹԵՄԱ. Կուսակցության քաղաքականությունը ֆինանսի և վարկի ասպարեզում . . . . .	14
8-րդ ԹԵՄԱ. Սպառողական կոոպերացիայի հերթական խնդիրները . . . . .	15
9-րդ ԹԵՄԱ. Պրոֆիությունները յերեսով դեպի արտադրություն . . . . .	17
10-րդ ԹԵՄԱ. Խորհուրդների դերն ու նշանակությունը ներկա շրջանում . . . . .	18
11-րդ ԹԵՄԱ. Պայքար կուլտուրայի և բանվորներից դեկավար կադրեր պատրաստելու համար . . . . .	20
12-րդ ԹԵՄԱ. Կուսակցությունը վորպես բանվոր դասակարգի ավանգարդ և կուսակցության պայքարը յերկու ֆրոնտի վրա . . . . .	21
13-րդ ԹԵՄԱ. Կոմիտեներն պայքարը համաշխարհային պրոլետարական դիկտատուրայի համար և համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադ ԽՍՀՄ-ի պաշտպանության խնդիրը . . . . .	25

<< Ազգային գրադարան  
  
 NL0191561



ԿԻՆՈ 15 ԿՈՒՐ. (1<sup>2</sup>/<sub>3</sub> Ժ.)



ПРОГРАММА НАЧАЛЬНОЙ ПАРТИЙНОЙ ШКОЛЫ  
(ГОРОДСКОЙ)

Госиздат ССР Армении  
Ереван — 1981